



# Մեծ ակոբ արադեանց

ԱՐՁԱՉԳԱՅԻՆ  
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ  
ՁԵԿՈՒՅՑՆԵՐ



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՄԻՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆԻ  
ԳԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱՍՍՏՐԱՆ

ՀՏԴ 82.0  
ԳՄԴ 83.3  
Հ 176

Այս գրքին  
հրատարակութեան հովանաւորն է  
**Թորոնթոյի**  
Համազգային Հայ Կրթական և  
Մշակութային Միութեան  
«Գլաժոր» մասնաճիւղի հիմնած  
«Յակոբ Կարապենց»ի անուան  
հրատարակչական Ֆոնտը  
Թորոնթօ 2022

Միջազգային գիտաժողով նվիրված  
Հակոբ Կարապենցին

Հակոբ Կարապենց: Ձեկույցների ժողովա-  
ծու.:  
Հ 176 Եր.: Լուսակն, 2022.- 308 էջ:

ՀՏԴ 82.0  
ԳՄԴ 83.3

ISBN 978-9939-899-11-4

© Համազգային հայ կրթական և մշակութային միություն, 2022 թ.  
© Լուսակն, 2022 թ.

ԱՌՋԱՇՏԱԿԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ  
նվիրված

**ՎԻՅԱԿՈՒԲ**  
**ԱՐԱՊԵՆՑԻՆ**

Ձեկույցների ժողովածու



Համազգային  
հայ կրթական  
և մշակութային  
միություն



Երևանի  
պետական  
համալսարան

Երևան  
2022

## ԿՎՐՎՊԵՆՑԸ ԳՐՎՊՍՄԱՎԿԱՆ ԱԻՋՕՐԵՎԿԱՆՆԵՐՈՒՄ (ՆՂՄՎԿՆԵՐ)

Նամակագրության հետ աշխատանքը գրականագետի համար անակնկալ բացայայտումների հնարատրություն է, որ շատ անելի հետաքրքրական է, երբ գործ ենք ունենում գրողի անտիպ ժառանգության հետ: Մենք հիմնականում յենուել ենք ե. Չարենցի անուան Գրականության եւ արուեստի թանգարանում պահուող ֆոնդերի (նշենք, որ Կարապետի ֆոնդը դեռեւս մշակման ենթարկուած չէ) եւ առանձին նամակների վրայ: Կարապետի նամակնու մասին համապարփակ խօսք ասել դժուար է: Նամակները գերակշիռ մասով ուղղուած են ամերիկահայ գրամշակութային դէմքերին՝ Համաստեղ, Սուրէն Մանուէլեան, Յակոբ Խաչմանեան, Յակոբ Ասատուրեան, Արամ Հայկազ, եւ թոյլ են տալիս ամբողջացնել ոչ միայն հեղինակի գրական նախասիրութիւնների ու աղընչութիւնների շրջանակը, այլեւ կազմել ամերիկահայ գրամշակութային առօրեայի ուրուագիծը: Յաւօք, մեր պրպտումների արդիւնքում միայն Ասատուրեանի եւ կանադահայ գրագէտ Վրէժ-Արմէն Արթինեանի պարագային է, որ ամբողջանում է երկխօսութիւնը: Առանձին նամակներ պահում են Յովսէփ Նալբանդեանի, Արթուր Անդրանիկեանի, Սեյրանուի Գեղամեանի, Չարմինէ Պօղոսեանի եւ այլոց մօտ: Փորձեցինք գտնել նաեւ «Բագին»ի խմբագիր Պօղոս Սնապեանի հետ նամակագրութեան նմուշներ, սակայն Սնապեանի՝ Այնճարում պահուող ֆոնդն էլ դեռ մշակման փուլում է եւ անհասանելի:

Կարապետի նամակագրական հասցէները յուշում են հեղինակի ու արեւմտահայ գրական աշխարհի սերտ աղընչութիւնները: Պատահական չէ, որ ինքն իրեն համարում է «Մի արեւելահայ ընկած արեւմտահայ ծովում»: Շարերը նոյնիսկ չեն հանդուրժում իմ ներկայու-

թիւնը: Բայց ինչ արած, լեզուս չեմ կարող փոխել: Յեւոյ փոխելու բան էլ չկայ»<sup>1</sup>:

Մէկ այլ օրինաչափութիւն էլ նկատել ենք նամակների թուագրումների հերթագայութեան հետ կապուած՝ Համաստեղին՝ 1948-1966 թթ., Յակոբ Խաչմանեանին՝ 1966-1967 թթ., Արամ Հայկազին՝ 1968-1977 թթ., Յակոբ Ասատուրեանին՝ 1978-1985 թթ., Սուրէն Մանուէլեանին՝ 1979-1980 թթ.: Ժամանակալին կտրուածքի առումով շատ անելի երկար՝ 1966-1993 թթ., այսինքն՝ ստեղծագործական ճանապարհի համարեայ ամբողջական ընդգրկումով է առանձնանում Վրէժ-Արմէն Արթինեանի հետ կապը:

Ժամանակագրական պարզ յաջորդականութիւնից խուսափելու համար՝ նամակները փորձել ենք դասդասել ըստ հարցադրումների.

**Ստեղծագործական հնհնութներ, հարորների հրապարակութիւնների հետ կապուած դրուագներ, դրանց շուրջ եղած արծագանքներ:**

Ստեղծագործական առումով գրողի առաջին «խորհրդատուն», կարելի է ասել, Համաստեղն է: Պատահական չէ, որ բնութեան ենթակայ նամակների թուագրումը սկսում է հենց նրան ուղղուածներից: Կարապետի կարծիքով, «Համաստեղը համաշխարհային գրականութեան մէջ պարմուածքի ամենափայլուն սիւներից մէկն է»<sup>2</sup>: Անելին՝ ինքը Համաստեղի ուղղակի ազդեցութիւնն է որսում պարսիկ բանագէտ եւ գրող Ասդեղ Հեղայեաթի ստեղծագործութեան վրայ, մասնատարբար ակնարկում է Աղասի Յովհաննիսեանի թարգմանութեամբ պարսիկ գրողի «Թափառաշրջիկ շունը» եւ Համաստեղի «Չալօ» պատմուածքների նմանութիւնը եւ թարգմանչի լուութիւնը իր այս դիտարկման շուրջ համարում իւրօրինակ պատասխան (ՀՖ, թիւ 741, Հոկտեմբեր 8, 1951):

Այս նամակներում Կարապետը պարզում է իր ստեղծագործական մտահոգութիւն ները, երկուութիւնները: Սկատի ունենք դեռ ճանապարհի սկզբում «երկու աշխարհների» սահմանագծում տարութերումները: Մի կողմում Ասիան է, միտում Ամերիկան, «իսկ ես այդ երկուսի մէջ, շարունակ հակասութիւնների մէջ եմ խճողում» (ՀՖ, թիւ 735, Սեպ-

1 ԳԱԹ, Արամ Հայկազի ֆոնդ, թիւ 214, Հոկտեմբեր 14, 1974: Այսուհետեւ այս ֆոնդից մէքքերումները կը ծանօթագրուեն փակագծերում, ԱՀՖ համառօտագրումով:

2 ԳԱԹ, Համաստեղի ֆոնդ, թիւ 733, Մայիս 5, 1948: Այսուհետեւ այս ֆոնդից մէքքերումները կը ծանօթագրուեն փակագծերում, ՀՖ համառօտագրումով:

տներ, 17, 1948): Այդ երկուսն էլ վերաբերում է նաև լեզուական ընտրությանը. հետևում է անգլիական գրականության, բայց ցատկով, քանի որ իր համար «*հայերենը լեզուների մէջ ամենաստուշն է*», ինչպէս յայտարարում է եղիշէ Չարենցի եւ Վահան Թէքէեանի հանգոյն (նոյն տեղում)<sup>3</sup>:

Պատահական չէ, որ առաջին գնահատականները ակնկալում է հենց Համաստեղից<sup>4</sup> համաձայնելով, օրինակ, «Անձանօթ հոգիներ» պատմածքի մասին Համաստեղի «լարուածութիւն» բնորոշման հետ, ինքն էլ իր հերթին փորձելով գտնել պատճառաբանութիւնը, թէ «թերեւս խառնուածքի թերութիւններից մէկն է: Կայ նաև «խմաստութեան» պակասը, որը յաճախ ոճային ու գաղափարային պողպատների պարճառ է դառնում» (ՀՖ, թիւ 758, Հոկտեմբեր 31, 1958):

Ի դէպ, նոյն «Անձանօթ հոգիներ»ի՝ արդէն ժողովածուի մասին անելի ուշ, շուրջ մէկ տասնամեակ անց, յայտնում է Արամ Հայկազին, երբ խոստովանում է, որ «*ցան այն է, որ մինչ այժմ գրածներս չար էլ չեմ հաւանում*» (ԱՀՖ, Մարտ 21, 1968), ապա ներհայեցումով իրեն հակադրում Արամ Հայկազին ու Համաստեղին. «*Կարողացաք ամբողջովին նուիրուել գրականութեան... Թերեւս այդ խնայութիւնն է, որ զարգում է իրաւ գրողը գրչակից: Պէտք է զոհել մի բան մի այլ բան սրտեղծելու համար: Դուք եւ Համաստեղը հասաք այդ հանգրուանին*» (ԱՀՖ, թիւ 214, Դեկտեմբեր 6, 1969): Իսկ արդէն մէկ տարի անց հաշուետու է լինում այդքան ձգձգուած հատորի լոյսընծայման մասին եւ բերում իր ակնկալիքները. «*Այժմ մնում է նստել ու սպասել գրախօսականներին, արդեօք, ով գիտէ, թերեւս ամիսներ փոքր: ... Ինչեւէ «Անձանօթ հոգիներ» այլեւս հանրութեան է պարկանում*» (ԱՀՖ, թիւ 214, Նոյեմբեր 16, 1970):

Ի դէպ, իր «ծանօթացման» եւ գրքերի սպառման համար սրտաբուխ շնորհակալութիւն է յայտնում Վրէժ-Արմէնին. «*Դեռ քո պարմական հարցազրոյցով<sup>5</sup> ինձ ժողովրդականութիւն պարզեցիր, իսկ հիմա էլ աշխարհում ես գրքերս սպառել: Ըստ երեւոյթին Աստուած քեզ*

3 Իսկ Չարենցին դիմումները մէկից անելին են արդէն բնագրային մակարդակում, այդ թուում եւ՝ «Ես իմ անուշ Հայաստանի» տաղից ուղղակի մէջբերումը (տես՝ Յ. Կարապետեան, Աղամի գիրքը, Նիւ Եորք, 1988, էջ 54):  
4 Ի դէպ, նոյն դերակատարութիւնն իր վրայ է վերցնում արդէն ինքը Վրէժ-Արմէն Արթինեանի առիթով. «Միջին Կարապետեան անկէ ետք ալ (1967-ից յետոյ՝ Բ.Ա.) պիտի մնայ միշտ քաղաքերողի իր դերին մէջ» (Վրէժ-Արմէն Արթինեան, Ոստայն 5, նամակապատում, Սոնորթայ, 2016, էջ 11):  
5 Խօսքը հասանաբար 1966-ին «Յուսպեր»ի հարցազրոյցի մասին է:

սրտեղծել է ինձ օժանդակելու համար: Քահանայ լինելի պիտի օրհնէի, սակայն աշխարհական լինելուս պարճառով միայն կարող եմ ջերմ շնորհակալութիւն յայտնել»<sup>6</sup>:

Այս պարագային էլ գրականագէտ-վերլուծողի հայեացքով փորձում է ինքնավերլուծութիւններ կատարել: «*Գրքիս առաջին երկու պարմութիւնները («Փայտէ նժոյգը» եւ «Վերջերս ո՛վ է գնացել Հալիֆարս» – Բ.Ա.)- գրում Արամ Հայկազին, – ինքնին «քաղաքական» միտում ու բնոյթ չունեն, այլ արարացողուն են հանդիսանում հայ իրականութեան՝ առանց կողմնակալութեան կամ կողմնորոշման: Այդուհանդերձ, գիտեմ, որ սովետները չպիտի սիրեն գիրքս: Ի՞նչ արած: To hell with them» (ԱՀՖ, թիւ 214, Դեկտեմբեր 2, 1970): Մենք կ'ուզենայինք կանգ առնել այստեղ անուագն երկու հանգամանքի վրայ. նախ, «կողմնակալութեան» եւ «կողմնորոշման» միջեւ իմաստային հասասարութիւն ղնելու փորձը, որոնք, մեր կարծիքով, նոյնական չեն. կողմնակալութիւն ոչ, բայց կողմնորոշում, ամէն դէպքում, բնագրային գնահատութիւններում կայ: Անին՝ սովետների հետ կապուած դիտարկումն ունէր քացորոշ հիմքեր: Նամակներից մէկում պատմում է դեռ 1966-ին Հայաստանի Գրողների տանը Գեղամ Սարեանի եւ Էդուարդ Թովիչեանի հետ հանդիպման եւ հիասթափութեան մասին, երբ իր «վրդովմունքին», թէ Համաստեղի, Արամ Հայկազի եւ այլոց գործերը չեն հրատարակում, վերջինս յայտնել է, որ ոչ միայն նրանց, այլեւ Շանթը ու Ահարոնեան են պատրաստում լոյս բնծայել: Ինչ մնում է իրեն, գրականագէտը պարզապէս յայտարարել է. «*Ձեր որոշ գործերում փողերի արանքում մեզ աննպաստ մըքեր կան: Մենք չենք կարող առայժմ ձեզ հրատարակել*» (ԱՀՖ, թիւ 214, Դեկտեմբեր 12, 1970)<sup>7</sup>: Ի դէպ, այս նամակագրութիւնից նաեւ երեսում է Հայաստանի մշակութային քաղաքականութեան հանդէպ Կարա-*

6 Վրէժ-Արմէն Արթինեան, Ոստայն 5, էջ 107-108:  
7 Այս յարաբերութիւնները մէկ անգամ չէ, որ յայտնում են Կարապետեանի նամակների առանցքում, որտեղ «*հայրենիքում տիրող քաղաքական մղձաւանջի*» դիմաց ամենից կարեւոր հետեւութիւնն այն է, որ «մեր քաղաքական, կուսակցական պայքարներից առաւել իմ մտաւետեանն հիմնական աղբիւրը հայ ժողովուրդն է ու մեր մշակութիւնը: Առանց այդ երկուսի, անմիտ կը լինեն քաղաքական մեր պայքարները», պատգամ, որ հնչում է նաեւ այսօրայի համար (ՀՖ, թիւ 749, Դեկտեմբեր 14, 1958):  
Նոյն մտահոգութիւնները ուղեկցում են Կարապետեանի նաեւ տասնամեակներ անց (1989). «*Վերջին հաշուով այնքան էլ կարեւոր չէ թէ մեզ կը հրատարակեն թէ ոչ. ճշմարիտ գործը հրաքիտի պէս կը պայքի եւ իր թէժ յասայի տակ կը կիգի ամեն տեսակի միջակութիւնների», ինչի մասին վկայում է նրա հասցէատերերից Արթուր Անդրանիկեանը (https://hetq.am/hy/article/112227, տես՝ «Երգիներ դիմանկարի համար. Յակոբ Կարապետեան» յօդուածը):*

պենցի եւ Ա. Հայկազի վերաբերմունքային տարբերությունը, որը Կարապենցն անուանում է «փափուկ հանգամանք», երբ իր նոր լույս տեսած հատորի մասին չի ակնկալում Ա. Հայկազի գրախոսականը:

Յետագայում եւս Ա. Հայկազին է ներկայացնում իր պատրաստելիք «Միջնարար 7» ժողովածուն (ԱՀՖ, թիւ 214, Դեկտեմբեր 2, 1970), որը լույս տեսաւ «Միջնարար» խորագրով շատ անելի ուշ, 1981-ին:

Նամակներում բառական տեղ է յատկացուած Վահէ-Վահեանի բնութագրութեամբ՝ «իր վրայ ամէնէն անելի խօսիլ տուլած»<sup>8</sup> «Կարթագէնի դուստրը» վէպի ստեղծագործական պատմութեանը՝ սկսած «ժամանակատր» «Ալմիրա» կոչելուց, նիւթի հանդէպ կասկածամտութիւնից. «Չիկնի թէ անառակի կամ այլասերուածի մէկն է լինելու... Երբ մի քիչ պաղի, նորից ու նորից կը քանդեն, րեսնեն ինչ է սարսուռ» (ԱՀՖ, թիւ 63-րդ, Նոյեմբեր 17, 1971) կամ էլ այդ տարակուսանքները ցոյցուի փորձերից, թէ «Աշխարհը եմ դրստորել արդի մարդկութեան յուզող խնդիրները: Նիւթը շեշտակի աղերս չունի հայութեան հետ: Ընդրեցի ապահայկական բեմը անելի համարձակօրէն փարածուելու եւ խորանայու համար»<sup>9</sup>, մինչեւ տպագրութիւնից յետոյ ընթերցողի հետ յարաբերութեան իւրօրինակ իմաստաւորումը, երբ հաշուի է նստում վերջինիս հետ, եթէ անգամ «սխալ եզրակացութիւնների» յանգի, քանի որ հեղինակն «արդէն իր ասելիքն ասել է եւ այլեւս փութալ գործը իրեն չի պարկանում...» «Դուստրի» վերաբերեալ ամէն ընթերցող փարբեր, իր ուրոյն մօտեցումն ունի: Այդ հանգամանքը ինձ միտքարում է» (ԱՀՖ, թիւ 214, Օգոստոս 30, 1973):

Մեծ հետաքրքրութիւնն է ցուցաբերում վէպի հանդէպ Յակոբ Ասատուրեանը, երբ մի տեսակ ցրում է Կարապենցի մտահոգութիւնները՝ նկատելով, որ «ունիս քնարական մարտը ո՞՞ մը, ուր արձակն իսկ րեղ րեղ կը բարձրանայ բանաստեղծութեան»: Բնագրային մանրամասն վերլուծութեան կողքին նկատում է «իմաստասիրական խորք»<sup>10</sup>:

8 Վահէ-Վահեան, Բանաստեղծին սիրտը, նամակներ, կազմեց Արամ Սեփեթեան, Պէտրոպ, 2012, էջ 228:  
9 Հասանդուխտ, Հետունքու մտերմութեամբ, նամակներ, Պէտրոպ, 2006, էջ 48 (Կարապենցի Ապրիլ 9, 1972 թուակիւր նամակը):  
10 ՉԱԹ, Յակոբ Ասատուրեանի ֆոնդ, թիւ 192, Յուլիս 14, 1978: Այսուհետեւ այս ֆոնդից մէջբերումները կը ծանօթագրուեն փակագծերով, ՅԱԾ համաձայնագրումով:  
Ստուադրապէս նոյնական գնահատական է ինչեցնում նաեւ «Նոր Աշխարհի հին սերնդանները» հատորի մասին մանաստորագրող ու շարութիւնը սեփեթելով «Տեփոթում», «Արգար ամու օտար հայրը» եւ «Արեւուտ արաստների կարտը» պատմումածքներին (ՅԱԾ, 192, Օգոստոս 19, 1980):

Շատ անելի անմիջական տպատրութիւնների արդիւնք է Վրժ-Արմէնի հետ նամակագրական մէկ դրուագը վերջինիս Անիլիէ այցի ընթացքին (որը կանադահայ գրագէտի կարծիքով, «պէտք է նկատուի ընթերցող-գրող յարաբերութեան մէկ արդիւնքը»<sup>11</sup>), ուր իրեն «ընտրացաւ Կարթագէնի դուստրը՝ Ալմիրան»<sup>12</sup>: Նամակի փոքրիկ տարածութեան վրայ կերպարային ու կառուցուածքային թոռցիկ վերլուծութիւնը գալիս է ապացուցելու Կարապենցի դիտարկումի իրաացիութիւնը տարրնկալումների հետ կապուած: Իսկ արդէն պատասխան նամակում իր ուրախութիւնն է յայտնում, որ «Ալմիրային հետդ փարար իրեն հարազատ անապարները եւ այդպիսով ազատագրեցիր իր հոգին Նիւ Եորքի ահեղի գերութիւնից»<sup>13</sup>:

Ինչ մտում է Ասատուրեանին, ապա նրա գնահատականների մէջ մեզ համար ուշագրաւ ժողովածուից ժողովածու Կարապենցի ստեղծագործական հանգրուանների արձանագրումն է, երբ ասենք, «Միջնարար»ի առիթով «գեղեցիկ փխրութիւն մը կամ փխրութեան արձանագրումը» բնորոշումի կողքին, որն ի դէպ, ուշադրութեան է արժանանում Կարապենցի պատասխան նամակում (ՅԱԾ, թիւ 584, Նոյեմբեր 16, 1981), նկատում է նաեւ ընթերցողին «անորոշ բախիղներու մէջ» նետելու փորձառութիւնը: «Նախորդ հարդրներէդ անելի, - մեր կարծիքով, ընդգծում է իրաացիօրէն, - հոս, մթննայու միտում մը կայ» (ՅԱԾ, թիւ 192, Նոյեմբեր 14, 1981):

Եւ զարգացնելով վերեւում նշուած միտքը՝ կապուած «իմաստասիրական խորք»ի հետ, «Աղամի գիրքը» վէպի առիթով յայտարարում է, թէ «Կը թուի թէ հոգեվերուծական ու խորհրդապայտական փարբերը այլեւս մնայուն կերպով մտած են խմորիդ մէջ» (ՅԱԾ, թիւ 192, Օգոստոս 19, 1983):

**Գրական ազդեցութիւնների ու երկխօսութիւնների ուրուագիծը կազմող դարողութիւններ:**

Գրեթէ օրինաչափութիւն է գրական նամականիւններում հեղինակների նախասիրութիւնների եւ ազդեցութիւնների ուրուագծումը: Եւ Յա

11 Վրժ-Արմէն Արթինեան, Ոստայն 5, էջ 62:  
12 Նոյն տեղում, էջ 62-63: Տե՛ս նաեւ Յակոբ Կարապենց, Վրժ Արմէն նամակագրութեան արխիւն, 13 Դեկտեմբեր, 1973 // Հորիզոն գրական, 25-08-2020:  
13 Յակոբ Կարապենց, Վրժ Արմէն նամակագրութեան արխիւն, Մարտ 1, 1974: Նկատենք նաեւ, որ այս պարագայում էլ ըստ էութեան վերջ դառնում է նամակագրի նիւթ (տե՛ս Վրժ-Արմէն Արթինեան, Ոստայն 5, էջ 62, Կարապենցի Մայիս 9, 1982 թուակիւր նամակից հատուածը):

կոր Կարապետը բացառություն չէ: Մեր նշած շրջանակները հիմնականում ընդգրկում են հայ եւ ամերիկեան գրականությունների շերտերը: Առաջինի պարագային «առաջնությունը» նորից վերապահուած է Համաստեղին, ում հետ գրողի հաղորդակցությունը յիշեցնում է Ջալեն Սիրմելեանի եւ Թէքեանի «մտերմիկ նամակագրությունը»: Ծիշդ է. «...որքան ես եմ հեռու Սիրմելեանից, դու էլ փարբեր ես Թէքեանից», բայց նկատենք, որ ինչպէս Սիրմելեանն էր «պարտական» Թէքեանին իր «Լոյս զուարթ»ի, այնպէս էլ ինքը Համաստեղին՝ կարծիքի ու քաջախեղանքի համար:

Պատահական չէ, որ Կարապետն-Համաստեղ ստեղծագործական մտերմությունը նկատում է նաեւ Ասատուրեանը, երբ խօսում է «Աբգար ամու օտար հարսը» պատմուածքի՝ Համաստեղի գործերից մէկի հետ նմանութեան մասին, ուր պապը չի ուզում տեսնել թոռանը (ՅԱՖ, թիւ 192, Օգոստոս 19, 1980): Միայն թէ գտնում է, որ Կարապետի «վերջաւորությունը *abrupt* է (կտրուկ – Ք.Ա.) եւ չի գոհացնէր ընթերցողը, կը թողի պէտք ունէր զարգացումի» (նոյն տեղում): Մեր կարծիքով, խօսքը Համաստեղի «Համբոյր» պատմուածքի մասին է: Կարապետն իր հերթին պատասխան նամակում, հաստատելով, որ գիտի Համաստեղի բոլոր գործերը, բայց այդ պատմուածքը չի կարդացել, նկատում է, որ ուրիշներն էլ են ասել «Համաստեղի մասին»: Անպատճառ ուզում է կարդալ «տեսնելու համար ընդհանուր լարը» (ՅԱՖ, թիւ 584, Նոյեմբեր 20, 1980): Ի դէպ, Ասատուրեանը «ընդհանուր լարեր» է որսում նաեւ Կարապետի «Աղամի գիրքը» եւ իր «Յովակիմի թոռնորդիները» վէպերի միջեւ՝ թերեւս ելնելով հենց Աղամի՝ Յովակիմի թոռը լինելու հանգամանքից (ՅԱՖ, թիւ 192, Օգոստոս 19, 1983):

Գրական երկխօսութեան առումով հրաշալի մէկ պատահիկ է ներկայացնում «Օրիորդ Անթառամ» պատմուածքի շուրջ ծաւալուող քննարկումը, որի մասին իմանում ենք Կարապետի՝ Արամ Հայկազին ուղղուած նամակներից: Փաստորէն Ա. Հայկազն աագի իրաւունքով խորհուրդ է տուել փոխել վերջաւորութիւնը (ԱՀՖ, թիւ 214, Ապրիլ 6, 1974), ինչը իրելու կատարուած փաստ՝ արձանագրում է աւելի ուշ գրուած նամակներից մէկում (նոյն տեղում Սեպտեմբեր 1, 1974)՝ մանրամասն բացատրելով փոփոխությունների ուղղությունը: Իսկ տարիներ անց պարզապէս յայտարարում է, որ «Դուք (իմա՝ Ա. Հայկազը – Ք.Ա.) ամէն իրաւունք ունէք այդ պատմուածքի համահեղինակը ճանաչուելու» (ԱՀՖ, թիւ 63 – լր., Դեկտեմբեր 31, 1977):

Ինչ մնում է ամերիկեան ազդեցություններին, ապա մեծ բաժինն ի հարկէ Սարոյեան-Հէմինգուէյ զոյգին է, ինչը «Պատուհան» պատ-

մուածքի աոիթով Յ. Ասատուրեանը ձեակերպում է իրրեւ «Հէմինգուէյ-սարոյեանական շունչ» (ՅԱՖ, թիւ 192, Դեկտեմբեր 1, 1985): Աս Յ. Կարապետն «ընդունում է» եւ նամակներում, երբ թուարկման մէջ տալիս է Հէմինգուէյի անունը, թէ՛ յայտնելով, թէ «Սարոյեանից սուրբել եմ անմիջականութիւնս ու անտեքստութիւնը»<sup>14</sup>, թէ՛ իր աննատարբեր ստեղծագործություններում՝ նշուած հեղինակների անունների կամ երկերի վկայակոչումներով: Բազմաթիւ հաստատումներից բաարար են միայն «Անձանօք հոգիներ», «Միջնարար» պատմուածքների ժողովածուների, «Աղամի գիրքը» վէպի համապատասխան հատուածների թուարկումները, կամ «Երկու աշխարհ» գրքի «Սարոյեանը՝ մասամբ ներհայեցողութեամբ» եւ «Սարոյեանն ու իր «մահագրությունները» փորձագրությունները:

Ինչ մնում է ինքնախոստովանություններին, ապա նկատում է, որ Թոմաս Էլիօթին, որը իր տեսողութեամբ «միտումնաւոր է մշուշոտում պայրկերը», փոխարինելու են գալիս Ռոբերթ Ֆրոսթը, Կարոս Ուիլեամսը եւ Ուոլթ Ուիթմենը, ումից պատրաստում է թարգմանել «Երգ ինձ համար»ը (ՀՖ, թիւ 741, Հոկտեմբեր 31, 1951): Աւելին՝ վերջինիս յայտարարում է «ամերիկեան գրականութեան իրական գոհարներից» (ՀՖ, թիւ 738, Յուլիս 6, 1950):

**Գրականութեան դերի ու նշանակութեան, գրապատմական հարցադրումների արծարծումներ:**

Կարապետնի նամակները կարեւոր են նրա գրական ինչ-ինչ հանգրուանների բացայայտման տեսանկիւնից եւ ուղղակի կապ են պահում քննարատ Կարապետնի աշխարհի հետ՝ հաստատելով նամականու միջժանրային բնոյթը: Նրա տեսադաշտում են թէ՛ նոր, թէ՛ նորագոյն շրջանի դէմքերն ու գրական զարգացումները: Առաջիններից մէկը առանձնացրել ենք Դանիէլ Վարուճանին, որի մասին յայտնում է, որ պատրաստում է խօսել Դետրոյթում Սեպտեմբեր 8, 1984-ին կայանալիք հանդիսութեան ընթացքին: Եւ հեղինակը չի թաքցնում իր անհանգստութիւնը Վարուճանի «շքեղ, պերճ, վսեմ» երեսոյթին մօտենալիս. Թէքեանի, Մեծարեւոյցի, Չարեւոյցի, Տէրեանի, Թումանեանի կամ Դուրեանի համեմատ չի կարողանում «հասնել, տեսնել, շօ-

14 «Նամակակնի. 1988-2018», հատոր Բ., կազմեց՝ Սիլվա Սուքիասեանը, Երևան, 2019, էջ 133 եւ 134 (Հրանդ Թամարզեանին ուղղուած 3 Օգոստոս, 1993 թուակիր նամակը):

շափել մարդ-Վարուժանը», քանի որ «Նա միշտ մնում է Պառնասի վրայ՝ անհասանելի ինչպես յունական մի աստված» (ՅԱՖ, թիւ 584, Օգոստոս 19, 1984<sup>15</sup>): Պատահական չէ, որ Կարապենցի գեղարուեստական բնագրերում նշուած հեղինակներից շատերին հանդիպել ենք, Վարուժանին՝ ոչ: Չի ուշանում պատասխան նամակը, ուր Յ. Ասատուրեանը տալիս է արեւմտահայ քերթողի թերեւս լաւագոյն բացատրական գնահատականներից մէկը. մեկնելով ու մեկնաբանելով «Պառնասի» ու մարդու փնտրողների շուրջ կարապենցեան դատումները՝ յայտարարում է. «Վարուժանը, «խելագարուած ամբոխներու» բանաստեղծը ըլլալէ աւելի (ակնարկում է Նախորդ նամակում Չարենցի օրինակի հանդիպադրումը – Բ.Ա.), մտաւորականութեան քերթողն է: ... Եւ «Պառնասի» բարձունքէն ինք վար իջնելու փոխարէն, կը ցանայ ընթերցողը բարձրացնել իր բարձունքին» (ՅԱՖ, թիւ 192, Սեպտեմբեր 1, 1984): 3. Կարապենցն իր հերթին համամիտ է Ասատուրեանի նկատառումներին եւ իր քաւարարութիւնն է յայտնում «մտքերի փոխանակութիւնից» (ՅԱՖ, թիւ 584, Սեպտեմբեր 28, 1984):

Յաջորդ ծաւալուն անդրադարձը վերաբերում է Համաստեղի «Սպիտակ ծիւղորդ»ին: Նախ, նկատենք, որ հեղինակին ուղղուած նամակի ծաւալները դուրս են ժանրաձեւի, բովանդակային առումով անզամ գրախօսութեան սահմաններից եւ ըստ էութեան՝ յիշեցնում են լայն ուսումնասիրութեան ուրուագիծ: Մեզ համար գրաւիչը նաեւ երկի՝ նմանօրինակ ստեղծագործութիւնների համաբնագրում որոշարկումի ճիգն է: Աւելորդ չէ նշել, որ այս աշխատանքը կատարում է վէպի՝ պարբերական մամուլում լոյսընծայումից առ նուազն երկու, իսկ առանձին հրատարակութիւնից 3-4 տարի անց: Այսինքն՝ ասելիքը անցել է խմորման ճանապարհ: Կարապենցը կողք կողքի է դնում Մախախախի «Չարթօնք», Կ. Չարեանի «Նաւը լեռան վրայ» եւ Համաստեղի «Սպիտակ ծիւղորդ» վէպերը, որոնցից առաջինը «հոյակապ յուշավէպ է», ջերմ, հարազատ ու հետաքրքրական, թէեւ «գեղարուեստական տեսակէտից կաղում է», երկրորդը «ոճային գործ է, հարուստ թոհիջներով, սակայն աննպայարակ»<sup>16</sup>, իսկ երրորդը՝ «աւելի ամուր հիմքե-

15 Սօսուորապէս նոյն մտքերն ենք կարդում նաեւ «Ղանիէ Վարուժան, հացի եւ լոյսի երգիչը» յօդուածում (տե՛ս «Երկու աշխարհ», գրական փորձագրութիւններ, Ուրբերթաւոն, 1992, էջ 303-305):  
 16 Չարեանի շուրջ իր ոչ բարեհաճ վերաբերմունքն է արտայայտում նաեւ մէկ այլ նամակում (ՀՅ, թիւ 739, Ղեկունքեր 25, 1950):

րի վրայ կառուցուած գործ», ինչին յաջորդում է գրականագիտական արդի չափումներին դիմացող ծաւալուն նկատառումների շարք՝ Համաստեղի երկի վիպական կառոյցի, հերոսների, ոճական տարրերի, հոգեբանական նկարագրերի կերտման վերաբերեալ, որտեղ հիացու մի կողքին անպայմանօրէն որսում ենք սիւմբոլային գծերի շուրջ անհամաձայնութիւններ, յատկապէս կապուած Մարտիկի ճակատագրի հանգուցալուծման հետ: Սակայն եզրակացութիւն այն է, որ կերպարն իր տեղն է գրաւելու որպէս «արքայատիպ», «կենտրոնաձիգ» հերոս, ինչպէս Րաֆֆու Սարհաղը, Ասլանը, Սամուէլը, Խենթը, Աբովեանի Աղասին, Մուրացանի Գոռ իշխանը (ՀՅ, թիւ 744, Մարտ 31, 1956):

Եւ չենք, որ նամակները հարուստ նիւթ են պարունակում հայրենի (Վախթանգ Անանեան, Ռազմիկ Դաւոյեան, Զօրայր Խալափեան, Նոյն տեղում, Փետրուար 3, 1974) եւ սփիւռքահայ (Չարեն Որբունի, Յարութ Կոստանդեան, Զուլալ Գազանճեան, Անդրանիկ Սարեան եւ ուրիշներ, ԱՀՅ, թիւ 214, Փետրուար 11, 1975) գրական նորագոյն զարգացումների, ինչպէս նաեւ ամերիկահայ գրչօջախի առանցքային դէմքեր Ա. Հայկազի («Կարօտ», «Չորս տարի Քիւրդիստանի լեռներու մէջ») եւ Ասատուրեանի («Քարի եւ հողի պատմութիւն», «Յովակիմի թոռնորդները») գրքերի վերաբերեալ, ինչն առաւել ամբողջական է դարձնում ընթերցողի պատկերացումը ամերիկահայ գրչօջախի մասին, որի կազմակերպման մէջ բաական ճիգեր էր գործադրում ինքը, ինչի մասին վկայում են նաեւ խնդրոյ առարկայ նամակները: Պատահական չէ վերլուծական շնորհների մասին Յ. Ասատուրեանի գնահատականը իր գրական գործունէութեան 50 ամեակի առիթաւ Կարապենցի ելոյթի առիթով. «Երբ քննադատը գրող է, արուեստագէտը, լին գրող՝ ինչպէս դուք, աւելի լաւ կը տեսնէ հարորի մը հոգեբանական ... գիծերն ու արժանիքները, քան Նոյնիսկ վարպետը գրաքննադատը, որ միայն քննադատ է: Կը խորհիմ երբեմն, թէ գրողի մը հոգին կարելի է բացաւրել միայն ուրիշ գրողի մը հոգիով, իսկ դուն ըրած էիր այդ լաւագոյն կերպով» (ՅԱՖ, թիւ 192, Յունիս, 10, 1984):

Այս գնահատականները կարելի էր նաեւ միայն Կարապենցին, այլ-եւ «ընթացողներին» ուսումնասիրելու համար:

Եթէ ամփոփելու լինենք, պիտի արձանագրենք, որ Կարապենցի նամակագրական էջերի վերհանումները հետազոտողին հնարարութիւն են տալիս բացատրելու գրողի ստեղծագործական դիմանկարի այլազան շերտեր, որոնք կարելի էր դերակատարում ունեն ինչպէս գրականագիտական, այնպէս էլ բանասիրական տեսանկիւնից:

**Բանալի բառեր:** Յակոբ Կարապենց, նամակներ, գրապատմական հարցադրումներ, ստեղծագործական խնդիրներ, գրական ազդեցություններ եւ երկխոսություններ, մշակութային քաղաքականություն:

## SUMMARY

**Knarik Abrahamyan**

*PhD in Philological Sciences, Associate Professor*

### HAKOB KARAPENTS IN LITERARY-HISTORICAL INCIDENCES (LETTERS)

The article is aimed to reveal the rich correspondence pages of Hakob Karapents. Mainly, based on the material kept in the Yeghishe Charents Museum of Literature and Art, the author tries to show the episodes of Hakob Karapents' creative world, his assessments of literary preferences and literary historical estimations. In some instances, the author appeals to parallel examination of the writer's manuscripts.

**Keywords:** Hakob Karapents, letters, literary-historical questions, creative problems, literary influences and dialogues, cultural policy.